Լոռու մարզի Ստեփանավան համայնքի կոշտ կենցաղային թափոնների հավաքման գործունեության տեխնիկական վերազինման

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Կատարող՝
«Քոնսեկոարդ» ՍՊԸ տնօրեն՝
Ս. Թևոսյան

Երևան - 2025

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

1. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ 4

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ՝ ԱՅԴ ԹՎՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳԻՐԸ 8

2.1. Տարածքի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները 8
2.2. Կլիմա 11
2.4. Տարածքի սեյսմիկ բնութագիրը 15
2.5. Մթնոլորտային օդ 15
2.6. Ջրային ռեսուրսներ 16
2.7. Հողային ռեսուրսներ 17
2.8. Կենսաբազմազանություն 18
2.9. Բնության հատուկ պահպանվող տարածքներ և բնության հուշարձաններ 18
2.10. Պատմության և մշակութային հուշարձաններ 19
2.11. Սոցիալ տնտեսական պայմանները 22

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 24

3.1. Ընդհանուր տեղեկատվություն 24
3.2. Իրավական կարգավորումները 24
3.3. Տեխնիկական բնութագրերը 25
3.4. Աղբի տեսակային կազմը 26
3.5. Վերազինման տեխնիկական լուծումները 27

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ 28

4.1. Մթնոլորտային օդ 28
4.1.1. Դիզելային վառելիքի այրման արգասիքները 28
4.1.2. Գազային վառելիքի այրման արգասիքները 29
4.2. Ազդեցություն ջրային ռեսուրսների վրա 31
4.3. Աղմուկ և թրթռում 31
4.4. Հողածածկ 31
4.5. Երթևեկություն 32
4.6. Կենսաբազմազանություն 32
4.7. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կլիմայի հնարավոր փոփոխություններ առաջացնող գործոնները 32
4.8. Կումուլյատիվ (հավաքական) ազդեցություն 33

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ՀԱՍՑՎՈՂ ՎՆԱՍԻ ՀԱՇՎԱՐԿ 33

6. ԱՂՏՈՏՈՒՄՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ 35
6.1. Ընդհանուր դրույթներ 35
6.2. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՏԵՂԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ-ով նախատեսված միջոցառումներ 35
6.3. Մթնոլորտային օդ 36
6.4. Ջրային ռեսուրսներ 36
6.5. Անբարենպաստ պայմաններում և վթարային իրավիճակներում նախատեսվող միջոցառումները և ծրագրերը 36
6.6. Սոցիալական ազդեցության մեղղման միջոցառումներ 38
7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ 38
7.1. Բնապահպանական կառավարման պլան 38
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ 39
7.2. Մշտադիտարկումների /մոնիթորինգի/ նպատակը 41
7.3. Մոնիթորինգի տեխնիկական նկարագրությունը 41
ՀԱՎԵԼՎԱԾ 1. Պետ.ռեգիստրի վկայականի պատճեն 42

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Ներկայացվող գործունեության շրջանակներում «Ստեփանավան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային հիմնարկը ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքում իրականացնում է կոշտ կենցաղային աղբի հավաքում և տեղափոխում Գյուլագարագի աղբավայր:

Հաշվի առնելով, որ գործունեության իրականացման համար օգտագործվող տեխնիկական միջոցները հնացել են, ինչպես նաև դրանց քանակը բավարար չէ, նախատեսվում է իրականացնել տեխնիկական վերազինում՝ գնելով նոր աղբատար մեքենաներ և աղբարկղներ:

Ներկայացվող գործունունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը (ՇՄԱԳՀ) մշակված է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի հիման վրա:

Սույն գործունեության ձեռնարկող է հանդիսանում «Ստեփանավան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ, հասցե՝ Հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Ստեփանավան, Ս. Սարգսյան փ., շ 1:

1. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Շրջակա միջավայրի պահպանության հարցերին առնչվող ՀՀ օրենքները ներկայացված են ստորև.

ՀՀ Հողային օրենսգիրք (2001)

Հողային օրենսգիրքը սահմանում է տարբեր նպատակների (ինչպիսիք են գյուղատնտեսությունը, քաղաքացիական շինարարությունը, արդյունաբերությունը և հանքարդյունաբերությունը, էլեկտրաէներգիայի արտադրությունը, փոխակերպումները և հաղորդակցության միջոցները, տրանսպորտը) համար ծառայող պետական հողերի օգտագործման կառավարումը:

Օրենսգիրքը սահմանում է նաև հատուկ պահպանվող տարածքների, անտառային, ջրային և պահուստային հողերը, ինչպես նաև անդրադառնում է հողերի պահպանությանն ուղղված միջոցառումներին, պետական/տեղական ինքնա-կառավարման մարմինների և քաղաքացիների իրավասություններին:

ՀՀ Ջրային օրենսգիրք (2002)

Հայաստանի Հանրապետությունում ջրային հարաբերությունները կարգավորվում են սույն օրենսգրքով, օրենսգրքից բխող օրենքներով և այլ իրավական ակտերով:

Օրենսգիրքը սահմանում է ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի կառավարման, օգտագործման և պահպանության հիմնական սկզբունքները:

ՀՀ Անտառային օրենսգիրք (2005)

Օրենսգիրքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:

ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (2011թ.)

ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պահպանության խնդիրները, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերք օգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության 2011թ. նոյեմբերի 28 ընդերքի մասին օրենսգրով:

Թափոնների մասին ՀՀ օրենք (2004)

Օրենքը կարգավորում է թափոնների հավաքման, տեղափոխման, կուտակման, մշակման, կրկնակի օգտագործման, հեռացման, ծավալի փոքրացման խնդիրներին վերաբերվող իրավական և տնտեսական հարաբերությունները, ինչպես նաև շրջակա միջավայրի, մարդու կյանքի և առողջության վրա դրանց բացասական ազդեցության կանխումը:

Օրենքը սահմանում է թափոնների օգտագործման օբյեկտները, պետական քաղաքականության հիմնական սկզբունքները և ուղղությունները, պետական ստանդարտավորման սկզբունքները, գույքագրումը, վիճակագրական տվյալների ներմուծումը, պահանջների իրականացման մեխանիզմները, թափոնների վերամշակման

սկզբունքները, թափոնների պետական մոնիթորինգի իրականացման սկզբունքները, թափոնների քանակի կրճատմանն ուղղված գործողությունները՝ ներառյալ բնօգտագործման վճարները, ինչպես նաև իրավական և ֆիզիկական անձանց կողմից բնությանը և մարդու առողջությանը պատճառված վնասի դիմաց փոխհատուցումը, թափոնների օգտագործումը, պետական մոնիթորինգի իրականացման պահանջները և իրավական խախտումները:

Օրենքը սահմանում է նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև իրավաբանական անձանց ու անհատների իրավունքներն ու պարտականությունները:

Աղբահանության և սանիտարական մաքրման մասին ՀՀ օրենք (2011թ.)

Սույն օրենքը կարգավորում է ՀՀ-ում աղբահանության և սանիտարական մաքրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է աղբահանության և սանիտարական մաքրման գործընթացի կազմակերպման սկզբունքները

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք՝ խմբագրված՝ 03.05.2023թ. (ՀՕ-150-Ն), կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում ռազմավարական էկոլոգիական գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, անդրսահմանային ազդեցության գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության, հանրության ծանուցման, հանրային լսումների իրականացման, պետական փորձաքննական եզրակացության տրամադրման, ուժը կորցնելու, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, փորձաքննության և նախատեսվող գործունեության իրականացման գործընթացներում նախաձեռնողների իրավունքների ու պարտականությունների հետ կապված հարաբերությունները:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ընդունված 1994թ., վերջին փոփոխությունը՝ 2022թ.) - կարգավորում է.

1) մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը.

2) մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

Գործունեությունը կարգավորվում է նաև այլ իրավական ակտերով, որոնցից հիմնականներն են.

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.),

Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.),

Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.),

Կառավարության որոշումներ և այլ իրավական ակտեր.

ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» 967-Ն որոշում,

«Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» *(վերնագիրը փոփ. 13.12.07 N 1451-Ն, 18.03.11 N 238-Ն, խմբ. 27.09.18 N 1029-Ն)* ՀՀ Կառավարություն 30 հունվարի 2003 թվականի N 121-Ն որոշում, որով սահմանվում է Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման պայմանները և կարգավորվում են դրա հետ կապված հարաբերությունները:

«Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարական նորմեր /ընդունված ՀՀ ԱՆ նախարարի 2002թ. մարտի 6-ի N138 հրամանով/:

Առողջապահության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի. 22-ի թիվ 25-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնները և նորմերը:

«Մթնոլորտային օդն աղտոտող (վնասակար) նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագծերի մշակման եվ սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագիծ ներկայացրած իրավաբանական անձանց եվ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձանց արտանետման թույլտվությունների տրամադրման կամ մերժման կամ ուժը կորցրած ճանաչելու մասին կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 4 հունվարի 2024 թվականի N 32-Ն որոշում:

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ՝ ԱՅԴ ԹՎՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2.1. Տարածքի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները

Ստեփանավան քաղաքը մտնում է ՀՀ Լոռու մարզի տարածաշրջանային կազմի մեջ՝ գտնվելով մարզի գրեթե երկրաչափական կենտրոնում, Ձորագետի միջին հոսանքի աջ և ձախ ափերին:

Ընդհանուր տարածքը 5333.6 հեկտար է[1], որից 1020 հա-ը կառուցապատված: Քաղաքի ընդհանուր պարագիծը 26.5 կմ է, հյուսիսից հարավ միջին լայնությունը կազմում է 6.3 կմ, իսկ արևելքից արևմուտք երկարությունը՝ 4 կմ:

Ստեփանավան քաղաքի ամբողջ երկարությամբ՝ արևելքից-արևմուտք անցնում է Հայաստանը ԱՊՀ երկրների հետ կապող Երևան-Թբիլիսի միջպետական նշանակության Մ3 ավտոմայրուղին, որը համայնքի համար ունի ռազմավարական և սոցիալ-տնտեսական նշանակություն:

Ստեփանավանից սկսվում են 3 հանրապետական նշանակության ճանապարհներ՝ Ստեփանավան-Ալավերդի, Ստեփանավան-Պրիվոլնոյե-Ախքյորփի և Ստեփանավան-Կաթնաղբյուր:

Հեռավորությունը Երևանից 139 կմ է, մարզկենտրոն Վանաձորից՝ 24 կմ[2]:

Ստորև բերված է գործունեության տեղանքի քարտեզը Գուգլ համակարգով, որտեղ ներկայացված են Ստեփանավան քաղաքը և Գյուլագարակի կոշտ կենցաղային թափոնների աղբավայրը:

[1] https://stepanavan.am/
[2] https://armstat.am/am/?nid=985

Նկար 1. Իրադրային քարտեզ



Նկար 2. Աղբահանման տարածքը

Ռելիեֆ և երկրաբանություն

Քաղաքը տեղակայված է Զորագետի հովտում, Բազումի լեռնաշղթայից հյուսիս, ընդարձակ սարահարթում ծովի մակարդակից 1397մ բարձրության վրա: Ռելիեֆի ձևագրական տիպերը հիմնականում արտահայտված են կանիոններով և կիրճերով:

Համաձայն երկրաբանական քարտեզների տարածաշրջանում հիմնականում գերակշռում են վերին պլիոցեն, դոլերիտային բազալտները:

Լիթոլոգիական տեսանկյունից տարածաշրջանին բնորոշ է չորրորդական ոչ պլիոցեն ժամանակաշրջանի ցամաքա-հրաբխային և նստվածքային համալիրների ալյուվիալ, դելյուվիալ նստվածքները:



Նկար 3. Մակերևույթի ձևագրությունը

2.2. Կլիմա

Տարածաշրջանն ունի բարեխառն չափավոր (ամառը՝ տաք ու խոնավ, իսկ ձմեռը՝ չափավոր ցուրտ, թույլ քամիներով և օպտիմալ խոնավությամբ) կլիմա:

Օդի միջին տարեկան ջերմաստիճանը գրանցվել է 7.2^{0}C, բացարձակ նվազագույնը՝ -30.7^{0}C, բացարձակ առավելագույնը՝ 36.8^{0}C:

Օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը 74։ Մթնոլորտային տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին 143 մմ, ապրիլ-հոկտեմբեր ամիսներին՝ 529 մմ։ Ձյան ծածկույթի առավելագույն տասնօրյակային բարձրությունը՝ 63սմ։

Ներկայացվող տարածքի կլիմայական պայմանների նկարագրության համար օգտվել ենք ՀՀ քաղաքաշինության նախարարի 2024թ. հունվարի 15-ի N03-Ն հրամանով հաստատված «Շինարարական կլիմայաբանություն ”ՀՀՇՆ 22-01-2024 փաստաթղթից։

Ստորև բերված աղյուսակներով ներկայացվում են տարածաշրջանի կլիմայական ցուցանիշները, որոնք պետք է հաշվառվեն նախագծման, շինարարության և շահագործման ընթացքում։

Աղյուսակ 2.2.1.Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը Ստեփանավան օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, ^{0}C												Միջին տարեկան ^{0}C	Բացարձակ նվազագույն ^{0}C	Բացարձակ առավելագույն ^{0}C
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Ստեփանավան	-3.6	-2.5	1.1	6.9	11.4	14.6	17.5	17.3	13.7	8.7	3.1	-1.5	7.2	-30.7	36.8

Աղյուսակ 2.2.2. Օդի հարաբերական խոնավությունը Ստեփանավան օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին Տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
														Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12					
Ստեփանավան	69	70	71	72	76	78	77	75	76	76	74	71	74	69	55	77	62

Աղյուսակ 2.2.3. Մթնոլորտային տեղումները Ստեփանավան օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Տարեկան	Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	Ըստ ամիսների														
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Ստեփանավան	21	27	42	69	114	122	73	56	48	47	34	19	672	143	529
	36	54	37	31	103	63	53	51	41	39	32	30	103		

Աղյուսակ 2.2.4. Չյան ծածկույթ Ստեփանավան օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի անվանումը	Չյան ծածկույթը			
	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Չյան մեջ ջրի առավելագույն քանակ, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, մմ
Ստեփանավան	63	73	147	54

Աղյուսակ 2.2.5. Քամու պարամետրերը Ստեփանավան օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիություն, % /միջին արագություն, մ/վրկ ըստ ուղղությունների								Անդորրի կրկնելիությունը,%	Միջին ամսական արագությունը,մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս-օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր-փետրվար ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Հյուսիսային (Հս)	Հյուսիս-արևելյան (ՀսԱրլ)	Արևել-յան (Արլ)	Հարավ-արևե-լյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավ-արև-մտյան (ՀվԱրմ)	Արև մտյան (Արմ)	Հյուսիս-Արև մտյան (ՀսԱրմ)						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Ստեփա-նավան	Հունվար	2	3	8	7	7	37	30	6	49	2.8	ՀրԱրմ	1.6	ՀրԱրմ	3.9
		2.0	1.3	1.5	2.0	3.0	3.9	2.8	2.2						
	Ապրիլ	2	3	11	10	6	25	34	9	45	2.0				
		2.2	1.4	1.6	1.9	2.2	3.1	2.6	2.2						
	Հուլիս	2	3	13	10	4	19	39	10	61	1.1				
		1.5	1.1	1.4	1.4	1.4	1.6	1.8	1.5						
	Հոկտեմ-բեր	2	3	12	10	5	24	37	7	59	1.3				
		1.7	1.3	1.4	1.4	1.6	2.2	2.2	2.0						

2.4. Տարածքի սեյսմիկ բնութագիրը

Նախատեսվող գործունեության տարածքը համաձայն ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04_«Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմերում» ներառված է ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի հաստատված քարտեզում:

Նախագծային աշխատանքների ժամանակ պետք է հաշվի առնվի սեյսմիկ վտանգի գործոնը, որը ըստ Հայաստանի Հանրապետության տարածքի հավանական սեյսմիկ վտանգի գոտիավորման քարտեզի՝ ՀՀՇՆ 20.04.2020թ. նախատեսվող գործունեության տարածաշրջանը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտու մեջ՝ Գրունտի սպասվելիք արագացումների մեծություններով՝ A, ազատ անկման g արագացման մասերով՝ Amax=0.4g:



Նկար 4. ՀՀ տարածքի հավանական սեյսմիկ վտանգի գոտիավորման քարտեզ

2.5. Մթնոլորտային օդ

Հայաստանի Հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներն իրականացվում են հիբրիդային դիտացանցի միջոցով: Այն բաղկացած է 15 հիմնական անշարժ՝ ակտիվ նմուշառման և ավտոմատ դիտարկումների դիտակայանից, որտեղ դիտարկումներն իրականացվում են ամենօրյա կտրվածքով և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետից, որտեղ իրականացվում են շաբաթական դիտարկումներ:

ՀՀ և միջազգային պահանջների համաձայն անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, փոշու, փոշու մեջ որոշվող մետաղների և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շարժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թ. օգոստոսի 2-ի N160-Ն որոշման:

Ստեփանավան համայնքի տարածքում «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տեղադրված մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներների համար նախատեսված հիմնական անշարժ և շարժական կայաններ տեղադրված չեն, և Ստեփանավան քաղաքի օդային ավազանի օդի որակի վերաբերյալ ելակետային տվյալներ պաշտոնական տեղեկագրերում ներկայացված տվյալներ չկան, հետևաբար տեղեկատվությունը վերցվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքից[3]՝

- ծծմբի երկօքսիդի համար՝ 0.006 մգ/մ խոր.,
- ազոտի օքսիդների համար՝ 0.033 մգ/մ խոր.,
- ածխածնի օքսիդի համար՝ 1.1 մգ/մ խոր.,
- չտարբերակված անօրգանական փոշու համար՝ 0.095 մգ/մ խոր.:

2.6. Ջրային ռեսուրսներ

Տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից:

Մակերևութային ջրերի քանակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է 151 դիտակետ Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) գետերի, ջրանցքների, ջրամբարների և Սևանա լճի վրա, որոնցում կատարվում են ամենօրյա դիտարկումներ ջրի և օդի ջերմաստիճանի, ջրի մակարդակի, սառցային երևույթների դիտարկումներ և ջրի ելքի չափումներ:

ՀՀ կառավարության «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 27-ի N 75-Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է

[3] https://meteomonitoring.am/page/1591

վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: Եթե ջրի որակի տարբեր ցուցանիշներ ընկնում են որակի տարբեր դասերի մեջ, ապա վերջնական դասակարգման մեջ հաշվի է առնվում վատագույնը:

Նախատեսվող գործունեության իրականացման տարածքը տեղակայված է Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքում:

Ըստ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթրինգի կենտրոն» ՊՈԱԿ վերջին՝ 2024 թվականի ամփոփագրի՝ Զորագետ գետի ջրի որակը Ստեփանավան քաղաքից վերև հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով, գետաբերանի հատվածում գնահատվել է «լավ» (4-րդ դաս):

Տաշիր գետի ջրի որակը Միխայելովկա գյուղից վերև հատվածում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով և մանգանով, Սարատովկա գյուղից ներքև հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված երկաթով, ալյումինով և կախութային չոր նյութերով:

2.7. Հողային ռեսուրսներ

ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի տարածաշրջանը հարուստ է անտառներով, վարելահողերով, արոտավայրերով, խոտհարքերով, որտեղ հիմնականում գերակշռում են սևահող կրազերծված, կարբոնատազուրկ հողային տիպերը:

Հողերի էրոզվածությունը 1-ին կարգի է՝ մինչև 1 տոկոս:



Նկար 5. Հողերի էրոզվածությունը

2.8. Կենսաբազմազանություն

Ըստ Հայաստանի ֆլորիստիկ շրջանների բաժանման տարածաշրջանը գտնվում է Լոռու ֆլորիստիկ շրջանում, ուր բուսականությունն աչքի է ընկնում տափաստանային բուսականությամբ՝ հացազգային, տարախոտա-հացազգային տեսակներով:

Գործունեության տարածքը գտնվում է Ստեփանավան քաղաքի բնակեցված և կառուցապատված գոտում: Տարածքում բուսածածկույթը և հողային ծածկույթը համատարած բնույթ չեն կրում, հանդիպում են տեղ-տեղ: Դրանք բնական չեն, ձևավորվել են կանաչապման արդյունքում:

2.9. Բնության հատուկ պահպանվող տարածքներ և բնության հուշարձաններ

Հայաստանում կենսաբազմազանության պահպանումը, հիմնականում, իրականացվում է բնության հատուկ պահպանվող տարածքներում (ԲՀՊՏ) (պետական արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր, բնության հուշարձաններ), որտեղ կենտրոնացած է բուսական և կենդանական աշխարհի տեսակազմի մոտ 60%-ը,

ներառյալ հազվագյուտ, վտանգված, անհետացման եզրին հայտնված և էնդեմիկ տեսակների ճնշող մեծամասնությունը:

ՀՀ Լոռու մարզում բնության հուշարձանների ցանկը ներկայացվում է ըստ ՀՀ կառավարության 2008 թվականի 14 օգոստոսի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշման.

Աղյուսակ 2.9.1. ՀՀ Լոռու մարզի բնության հուշարձանների ցանկը

№	Անվանումը (նկարագիրը)	Տեղադիրքը
	Երկրաբանական հուշարձաններ	
28.	«Անանուն» զոլավոր դայկաներ	Լոռու մարզ, Լալվար գետի կիրճ
29.	«Անանուն» դայկաների համակարգ	Լոռու մարզ, Գարգառ գյուղից 5 կմ հվ, Պուշկինի լեռնանցքի մոտ
30.	«Գետնանձավ» անձավային թունել	Լոռու մարզ, Լոռիբերդ գյուղից 2 կմ հվ-արլ, Ջորագետի ձախ ափին, հունից 40 մ բարձրության վրա
	Ջրագրական հուշարձաններ	
6.	«Թռչկան» ջրվեժ	Լոռու մարզ, Չիչկան գետի աջակողմյան Թռչկան վտակի վրա
	Կենսաբանական հուշարձաններ	
5.	«Մրտավարդ կովկասյան»	Լոռու մարզ, Պուշկինի լեռնանցք

Համաձայն ՀՀ կառավարության 25 սեպտեմբերի 2014 թվականի N 1059-Ա որոշման Լոռու մարզի տարածքում են գտնվում. «Գյուլագարագի», «Կովկասյան մրտավարդենու» և «Մարգահովտի» պետական արգելավայրերը, որոնք գտնվում են Ստեփանավան քաղաքից համապատասխանաբար՝ 6,83 կմ դեպի հյուսիս-արևելք, 35,6 կմ դեպի հարավ-արևելք և 42 կմ դեպի հարավ-արևելք հեռավորությունների վրա:

Հարկ է նշել, որ ծրագրի անմիջապես ազդեցության ենթակա և հարակից տարածքներում չկան ԲՀՊՏ-ներ՝ արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր կամ բնության գրանցված հուշարձաններ:

2.10. Պատմության և մշակութային հուշարձաններ

Ստորև ներկայացվում է Ստեփանավան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը՝ համաձայն ՀՀ կառավարության N 49-Ն որոշման (ընդունված՝ 29.01.2004թ.).

Աղյուսակ 2.10.1. ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը

Հուշարձանախումբը, հուշարձանը	***Ժամանակը***	***Տեղը բնակավայրի նկատմամբ, հասցեն***	***Ծանոթագրություն***
ԱՄՐՈՑ	Քրիստոսից առաջ 4-3 հազ.	քաղաքից 1 կմ ամ	
ԱՄՐՈՑ	Քրիստոսից առաջ 2-1 հազ.	Արմանիս-Կաթնաղբյուր ճանապարհին	բլրակի վրա, ավերված
Բնակատեղի «Օրան-Լոռի»	Քրիստոսից առաջ 2-1 հազ.	Տաղեր և Դեղն գետերի միացման կետից ամ	«Բուզեր» վայրում
ԲՆԱԿԱՎԱՅՐ	10-13-րդ դդ.	քաղաքի ամ եզրին, Օրան Լոռե գետի ձախ ափին	քարանձավային, «Գալոյի բոստանի» դիմաց
ԲՆԱԿԱՏԵՂԻ	Քրիստոսից առաջ 2-1 հազ.	քաղաքից 1.5 կմ ամ, Աչաջուր տեղանքում	
ԲՆԱԿԱՏԵՂԻ «ՉԵՉՄԱՆԻՍ»	Քրիստոսից առաջ 4-1 հազ.	քաղաքի ամ եզրին	բլրի գագաթին
Դամբարանադաշտ «Չեչմանիս»	Քրիստոսից առաջ 13-9 դդ,	բնակատեղիում, խճուղու շրջակայքում	
ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	10-11-րդ դդ.	քաղաքից 3 կմ հս-աե, Ջորագետի կիրճում	
ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	12-13-րդ դդ.	անտառտնտեսության տարածքում, Պրիվոլնի-Ախքյորփի ճանապարհից ձախ	
Մատուռ	12-13-րդ դդ.	գերեզմանոցում	
ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	12-17-րդ դդ.	քաղաքից ամ	«Գալոյի բոստան» վայրում, բլրի վրա, ավերված
ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	միջնադար	քաղաքի ամ կողմում, Տաշիր գետի ձորում	
ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ԱՉԱՋՈՒՐ»	5-17-րդ դդ.	քաղաքից 3 կմ հս-աե, Ջորագետի կիրճում	
Եկեղեցի	4-5-րդ դդ.	քաղաքից 3 կմ հս-աե, Աչաջուր գյուղատեղիում, Ջորագետի կիրճում	
Եկեղեցի	12-13-րդ դդ.	Ջորագետի ձախ ափին, Աչաջրի սկզբնամասում	Կիսավեր
ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ՕՐԱՆ ԼՈՌԵ»	12-17-րդ դդ.	քաղաքից ամ	հրվանդանի վրա
Գերեզմանոց	15-17-րդ դդ.	Կաթնաղբյուրի ճանապարհին	
Եկեղեցի «Օրան-Լոռե»	12-13-րդ դդ.	քաղաքից ամ,	հարթության վրա, երևում են միայն հիմնապատերը
Զանգակատուն	19 դ.	եկեղեցու մոտ	
Ճանապարհ	10-20-րդ դդ.	Ջորագետի ձախ ափին, կիրճում	

ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք. ա. 2-1 հազ.	քաղաքի ամ մասում	«Գալոյի բոստան» կոչվող բլրի վրա
ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք. ա. 2-1 հազ.	քաղաքից 1 կմ ամ, Արմանիս-Կաթնաղբյուր խճուղու մոտ	
ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք. ա. 2-1 հազ.	քաղաքից 2 կմ հվ-ամ, Ստեփանավան- Տաշիր խճուղուց աջ	լճերի մոտ
ԵԿԵՂԵՑԻ	10-11-րդ դդ.	քաղաքի ամ մասում	
Գերեզմանոց	10-19-րդ դդ.	եկեղեցու շրջակայքում	
ԵԿԵՂԵՑԻ «ՉԻՉՄԱՆԻՍ»	5-6-րդ դդ.	քաղաքի ամ եզրին	Ավերված
Գերեզմանոց	17-18-րդ դդ.	քաղաքի ամ մասում, եկեղեցու շուրջը	
Խաչքար	12-13-րդ դդ.	եկեղեցու մեջ	
Խաչքար	12-13-րդ դդ.	ագուցված է եկեղեցու ամ ճակատին	
Խաչքար	12-13-րդ դդ.	ագուցված է եկեղեցու ամ ճակատին	
ԵԿԵՂԵՑԻ ՍԲ. ՍԱՐԳԻՍ	19 դ.	քաղաքի մեջ	
Զանգակատուն	1903 թ.	կից է եկեղեցուն հվ-ից	
Խաչքար	12-13-րդ դդ.	ագուցված է եկեղեցու աե ճակատին	
Խաչքար	12-13-րդ դդ.	ագուցված է եկեղեցու աե ճակատին	
Խաչքար	1217 թ.	ագուցված է եկեղեցու աե պատին	Արձանագիր
Խաչքար	13 դ.	ագուցված է եկեղեցու ամ ճակատին	
Խաչքար	13-14-րդ դդ.	եկեղեցու բակում	
ԽԱՉՔԱՐ	12-13-րդ դդ.	թիվ 51866 զին. մասի տարածքում	ընկած է գետնին
ԽԱՉՔԱՐ	1210 թ.	թիվ 51866 զին. մասի տարածքում	ընկած է գետնին
ԿԱՄՈՒՐՋ	1927 թ.	քաղաքից 1 կմ հս, Օլան-Լոռե գետի վրա, Աչաջուր տեղանքում	
ՀՈՒՇԱՐՁԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ	1969 թ.	քաղաքի մեջ	
ՀՈՒՇԱՐՁԱՆ ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԻՆ	1982 թ.	քաղաքի մեջ	
ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐ ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ	1978 թ.	կենտրոնական հրապարակում	
ՁԻԹՀԱՆ	19 դ.		

ՄԱՏՈՒՌ	12-13-րդ դդ.	քաղաքի ամ մասում, Զորագետի ձախ ափին	Ժայռափոր
ՄԱՏՈՒՌ	12-13-րդ դդ.	քաղաքի ամ մասում, Զորագետի ձախ ափին	«Գալոյի բոստան»-ի դիմաց
ՄԱՏՈՒՌ ՍԲ. ՆՇԱՆ	1871 թ.	քաղաքից 2 կմ ամ, Արմանիսի ճանապարհին	
Խաչքար	12-13-րդ դդ.	ագուցված է մատուռի պատի մեջ	Հատված
Խաչքար	12-13-րդ դդ.	ագուցված է մատուռի պատի մեջ	Հատված
Խաչքար	12-13-րդ դդ.	մատուռի պատի մեջ	Հատված
Խաչքար	12-13-րդ դդ.	մատուռի պատի մեջ	Հատված
Խաչքար	12-13-րդ դդ.	ագուցված է մատուռի պատի մեջ	Հատված
Խաչքար	12-13-րդ դդ.	ագուցված է մատուռի պատի մեջ	Հատված
Խաչքար	12-13-րդ դդ.	ագուցված է մատուռի պատի մեջ	Հատված
Խաչքար	12-13-րդ դդ.	ագուցված է մատուռի պատի մեջ	Հատված
ՋՐԱՆՑՔ	17-19-րդ դդ.	քաղաքից 3 կմ հս-աե, Զորագետի կիրճում	
ՋՐԱՆՑՔ	19-20-րդ դդ.	քաղաքից 1 կմ աե, Զորագետի կիրճում	
ՔԱՐԱՅՐ-ԿԱՑԱՐԱՆ	Ք. ա. 2-1 հազ.	քաղաքի հվ մասում, «Մայորի ձոր»-ում	
ՔԱՐԱՅՐ-ԿԱՑԱՐԱՆ	10-11-րդ դդ.	քաղաքից հս-աե	Կիրճում
ՔԱՐԱՅՐ-ԿԱՑԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ	Ք. ա. 2-1 հազ. միջնադար–	քաղաքի ամ մասում	
Մատուռ	12-13-րդ դդ.		Ժայռափոր
Քարայր-կացարան	Ք. ա. 2-1 հազ.		

2.11. Սոցիալ տնտեսական պայմանները[4]

Լոռու մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիսում: Այն հյուսիսից պետական սահմանով սահմանակից է Վրաստանին, արևելքից՝ Տավուշի մարզին, հարավից՝ Արագածոտնի, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերին, իսկ արևմուտքից՝ Շիրակի մարզին:

Լոռու մարզը ՀՀ ամենաշատ քաղաքներ ունեցող մարզն է:

[4] https://armstat.am/file/doc/99553418.pdf

Ըստ վիճակագրական կոմիտեի ահյ պահին վերջին տարեգրքի 2023թ. մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ տնտեսության համապատասխան հատվածների ընդհանուր ծավալում կազմել են.

- ➢ արդյունաբերություն 3.8 %,
- ➢ գյուղատնտեսություն 8.9 %,
- ➢ շինարարություն 4.2 %,
- ➢ մանրածախ առևտուր 2.3 %,
- ➢ ծառայություններ 1.1 %:

Մարզի տնտեսության առաջատար ոլորտները գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունն են: Լոռու մարզում զարգացած է նաև զբոսաշրջությունը:

Գյուղատնտեսության ոլորտում առանձնանում են հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի և անասնաբուծական մթերքի արտադրությունները:

Մարզի արդյունաբերության հիմնական ուղղություններն են հանքագործական արդյունաբերությունը և մշակող արդյունաբերությունը:

Մարզի տարածքի կենտրոնական մասով անցնում է ՀՀ գլխավոր երկաթուղին:

Լոռու մարզում է գտնվում ՀՀ ամենաերկար ավտոտրանսպորտային թունելը, որն անցնում է Բազումի լեռնաշղթայի տակով և Ստեփանավան-Վանաձոր հիմնական ավտոերթուղու մաս է կազմում:

Մարզում է գտնվում Գոգավան-Պրիվոլնոյեի մաքսակետը:

Ստեփանավան քաղաք

Տարածք՝ 1 666 հա

Բնակչություն՝ 12,114 հազ. (2024թ. տարեսկզբին)

Քաղաքը գտնվում է ծովի մակերևույթից 1 397[5] մ բարձրության վրա:

Քաղաքով է անցնում Երևան-Թբիլիսի միջպետական նշանակության ճանապարհը:

Քաղաքը գտնվում է Երևանից 139 կմ, մարզկենտրոն Վանաձորից՝ 24 կմ հեռավորության վրա:

Քաղաքում գործում են արտադրական մանր ու միջին սննդի, կահույքի և էլեկտրասարքերի արտադրությամբ զբաղվող կազմակերպություններ:

[5] https://www.arlis.am/Annexes/7/2024_N03hav.pdf

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Ընդհանուր տեղեկատվություն

Ստեփանավան քաղաքի աղբահանության՝ աղբի հավաքման և տեղափոխման գործընթացն իրականացնելու է «Ստեփանավան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ը:

Աղբահանությունը կատարվում է Ստեփանավան քաղաքի բոլոր տարածքներում տեղադրված աղբամաններից և աղբարկղերից:

Բնակավայրերում աղբը հավաքվում է աղբարկղերում և ըստ կուտակման տեղափոխվելու է աղբավայր: Աղբի հավաքման որոշակի ժամանակացույց չկա: Աղբի կանոնակարգված տեսակավորում չի կատարվում, սակայն բնակիչներից ոմանք փաստացի առանձնացնում և հանում են մետաղների, որոշ պլաստիկ իրերի և մի քանի այլ տեսակի մնացորդներ:

3.2. Իրավական կարգավորումները

Համաձայն «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի.

«աղբահանություն՝ *գոյացող աղբի, ինչպես նաև շինարարական ու խոշոր եզրաչափերի աղբի հավաքում, պահում, փոխադրում և տեղադրում աղբավայրում, այդ թվում՝ դրանց տեսակավորում ու փոխադրում աղբի վերաօգտագործման, օգտահանման, վերամշակման և վնասազերծման նպատակով.*»:

Սույն ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված գործունեությունը ներառում է միայն՝ «գոյացող աղբի հավաքում և փոխադրում», առանց՝ «դրանց տեսակավորման, աղբի վերաօգտագործման, օգտահանման, վերամշակման և վնասազերծման» գործընթացների, քանի որ հիմնարկը հնարավորություն չունի տեսակավորել աղբն, ընդունել և տեղափոխել շինարարական թափոններ:

Աղբահավաքման գործընթացները կանոնակարգվում են «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի հետևյալ սկզբունքների.

- Համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման սխեման հաստատում է համայնքի ավագանին.
- Աղբի փոխադրումն իրականացվում է դրա համար նախատեսված հատուկ մասնագիտացված տեխնիկայի և համապատասխան անձնակազմի միջոցով՝ սանիտարահիգիենիկ կանոններին և նորմերին, ինչպես նաև սանիտարական սխեմային համապատասխան.

- Շինարարական, խոշոր եզրաչափերի, օգտահանման և վերամշակման ենթակա աղբը փոխադրվում է առանձին-առանձին՝ սահմանված նորմերին ու կանոններին համապատասխան.
- Աղբամաններում արգելվում է տեղադրել կամ պահել արտադրական թափոնները, էլեկտրոնային և էլեկտրատեխնիկական սարքավորումների թափոնները, սնդիկ պարունակող լամպերը և այլ արտադրանք, էլեկտրական կուտակիչները և մարտկոցները, անվադողերը, այրվող, շիկացած կամ տաք աղբը, բժշկական թափոնները, խոշոր եզրաչափերի աղբը, ձյունը և սառույցը, հեղուկ թափոնները, ինչպես նաև այլ վտանգավոր թափոններ, որոնք կարող են վնաս հասցնել աղբահանություն կատարող անձանց կյանքին և առողջությանը:

«Ստեփանավան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային հիմնարկն, որը սույն նախաձեռնության արդյունքում կդիմի շրջակա միջավայրի բնագավառի պետական կառավարման լիազորված մարմին (լիցենզավորող մարմին)՝ վտանգավոր թափոնների գործածության լիցենզիա և լիցենզիայի վտանգավոր թափոնների հավքաման և տեղափոխման ներդիրներ ստանալու համար:

3.3. Տեխնիկական բնութագրերը

Ինչպես արդեն նշվել է, Ստեփանավան քաղաքի աղբահանությունն իրականացվում է «Ստեփանավան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ կողմից, որն ունի համապատասխան տեխնիկական միջոցներ և մասնագիտացված անձնակազմ:

Աղբի հավաքումն իրականացվում է Ստեփանավան քաղաքում տեղադրված տարբեր չափերի աղբամաններից և աղբարկղերից: Ընդամենը քաղաքում հիմնարկում առկա են 172 աղբաման, սակայն հավաքման համար պիտանի են 110-125: Աղբարկղերը ստանդարտ տեսակի կանաչ գույնի, 660 լ տարողությամբ պլաստիկ արկղեր են: Աղբամանների թիվը փոփոխական է, քանի որ դրանք հաճախ տեղափոխվում են, կամ հանվում են վերանորոգման նպատակով:

Աղբարկղերը տեղակայված են բանուկ վայրերում, դպրոցների, բազմաբնականան շենքերի (ԲԲՇ) հարևանությամբ՝ ԲԲՇ-ներից 25-30 մ հեռավորության վրա, որպեսզի կանխվի աղբակույտերի գոյացումը ԲԲՇ-ների հարակից տարածքներում: Աղբամաններ կան նաև անհատական բնակելի տների թաղամասերում: Աղբահանությունն իրականացնելու համար համայնքը բաժանված է ինը տարածքների՝ բոլորն էլ սպասարկվում են:

Համայնքային հիմնարկն աղբի հավաքման համար տվյալ պահին օգտագործում է առկա տեխնիկական միջոցները՝ աղբահավաք մեքենաներ՝ թվով 3 մեքենա, դրանք են.

- 1 հատ REANULT M-230 մակնիշի աղբատար մեքենա,
- 2 հատ ГАЗ 33-098 մակնիշի ինքնաթափ բեռնատար մեքենա:

Հիմնարկի կազմում մա նաև ավլող-լվացող մեքենա, սակայն այն անսարք է և ներկայում չի օգտագործում:

Աղբի հավաքմամբ զբաղվող անձնակազմը բաղկացած է 12 հոգուց:

Տարեկան աշխատանքային օրերի և ժամերի թիվը՝ 303 օր/տարի, 2011 ժամ/տարի:

Աղբի օրական հավաքվող և տեղափոխվող քանակը կազմում է մոտավորապես 8.96 տ.:

2020 – 2024 թվականների տարեկան աղբի հավաքման տարեկան քանակները կազմել են.

- 2020 – 2718 տ/տարի,
- 2021 – 2706 տ/տարի,
- 2022 – 2710 տ/տարի,
- 2023 – 2716 տ/տարի,
- 2024 - 2715 տ/տարի,

Համայնքում ամենօրյա աղբահանությունը իրականացվում է երկուշաբթիից շաբաթ, 3 մեքենաների միջոցով: 3 մեքենաներից յուրաքանչյուրը օրական իրականացնում է երկու երթ:

Աղբի հավաքման ժամանակ տեղում իրականացվում է նաև աղբամանների շրջակայքում թափված աղբը: Անհրաժեշտության դեպքում կատարվում է աղբամանների ախտահանում հատուկ փրփրային նյութերով, որպիսզի չառաջանա արտահոսք:

Աղբը աղբամաններից բարձվում է աղբատար մեքենաների մեջ և անմիջապես տեղափոխվում է Գյուլագարագի աղբավայր:

Գլուլագարակի աղբավայրը պատկանում է Գյուլագարակ համայնքին և շահագործվում է Գյուլագարակ համայնքի սանիտարական ծառայության կողմից:

Աղբավայրը նախատսվում է փակել, քանի որ այն չի համապատասխանում բնապահպանական և սանիտարական նորմերին:

Ելնելով այս իրավիճակից Ստեփանավանի համայնքապետարանը նախապատրաստական աշխատանքներ է իրականացնում բնապահպանական ու սանիտարական նորմերին համապատասխան աղբավայրի ստեղծման համար:

3.4. Աղբի տեսակային կազմը

Ստեփանավան համայնքում հավաքվող կոշտ կենցաղային աղբի կազմը գործնականում ոչնչով չի տարբերվում հանրապետության այլ քաղաքներում հավաքվող աղբի կազմից: «Ստեփանավան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» հիմնարկը հավաքում է միայն քաղաքային ախբարկներում հավաքվող աղբը՝

չիրականացնելով դասակարգում, ուստի սույն բաժնում ներկայացվում են «ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՏԵՂԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ»-ում բերված ընդհանուր խմբերը.

1. **Խոշոր եզրաչափերի թափոն** - խոշոր եզրաչափերի թափոնը հեռացվում է տնտեսվարողների կողմից: Հաշվառում չի իրականացվում:
2. **Շինարարական աղբ** - հիմնականում հեռացվում է տնտեսվարողների կողմից: Հաշվառում չի իրականացվում:
3. **Շահագործումից դուրս եկած ավտոմեքենաներ, մետաղական ջարդոն** - հիմնականում հեռացվում է տնտեսվարողների կողմից: Հաշվառում չի իրականացվում:
4. **Անվադողեր** - հիմնականում հեռացվում է տնտեսվարողների կողմից: Հաշվառում չի իրականացվում:
5. **Փաթեթավորում և փաթեթվածք** - հիմնականում հեռացվում է տնտեսվարողների կողմից: Հաշվառում չի իրականացվում:
6. **Էլեկտրական և էլեկտրոնային թափոն** - Հաշվառում չի իրականացվում:
7. **Կենսաբանական թափոն** - Հաշվառում չի իրականացվում:
8. **Վտանգավոր թափոններ** - Հաշվառում չի իրականացվում:

Ստեփանավան համայնքում աղբի հաշվառումն իրականացվում է ըստ ծավալի՝ համապատասխան կշեռքների բացակայության պատճառով:

3.5. Վերազինման տեխնիկական լուծումները

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեխնիկական միջոցները հնացած են, իսկ ԳԱԶ 33-098 մակնիշի ինքնաթափ բեռնատար մեքենաները չեն ապահովում աղբի ավտոմատացված բեռնում, Ստեփանավանի համայնքապետարանը նախատեսում է իրականացնել աղբահավաքման տեխնիկական պարկի վերազինում, այդ թվում.

- Գնել նոր 660 լ տարողությամբ պլաստիկ արկղեր, ընդամենը 50 – 60 հատ, որպիսի հնարավոր լինի փոխարինել հնացած և վերականգմանը ոչ ենթակա աղբարկղերը. Ինչպես նաև ըմդլայնել հավաքման ցանցը,
- Գնել նոր ժամանակակից աղբատար մեքենաներ՝ չինական արտադրության HOWO 12 cbm մակնիշի կամ համարժեք ցուցանիշների 3 հատ աղբատար մեքենա,
- Կապիտալ վերանորոգման ենթարկել ավլող-լվացող մեքենան:

Նշված վերազինումը չի առաջացնի աղբի հավաքման ծավալների կամ հաճախականության փոփոխություն:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Աղբահանության ընթացքում ազդեցությունը կապված է աղբամանների և աղբարկղների սպասարկման, աղբի բարձման և տեղափոխման ժամանակ ավտոտրանսպորտային միջոցների շահագործման աշխատանքների հետ:

4.1. Մթնոլորտային օդ

Աղբավայրի շահագործման ընթացքում օդային ավազանի վրա ազդեցությունը պայմանավորված է ավտոտրանսպորտային միջոցների կողմից վառելիքի օգտագործման արդյունքում առաջացող արտանետումներով:

Աղբահավաքումը կատարվում է 3 աղբահավաք մեքենաների միջոցով: Որպես վառելիք այս տրանսպորտային միջոցներն օգտագործում են գազ և դիզելային վառելիք, ընդ որում հիմնականում գազ:

4.1.1. Դիզելային վառելիքի այրման արգասիքները

Դիզ. վառելիքի հետ կապված արտանետումները հաշվարկվում են “Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակների որոշման” մեթոդական հրահանգի[6] հիման վրա:

Ըստ նշված մեթոդակարգի ծանր ավտոտրանսպորտի և տեխնիկայի տեսակարար արտանետումները բերված են ստորև աղյուսակ 4.1.1.1.-ում:

Աղյուսակ 4.1.1.1. Տեսակարար արտանետումներ (գ/կգ վառելիք)

Վառելիքի տեսակը	Նյութի անվանումը						
	NO_x	CH	ՑՕՄ	CO	N_2O	CO_2	ՊՄ
Դիզելային վառելիք	42.3	0.243	8.16	36.4	0.122	3138	4.3

Հաշվի առնելով, որ աղբահավաքման համար օգտագործվում են ժամանակակից տեխնիկական միջոցներ, պարկի տարիքի հետ կապված գործակիցները չեն կիրառվում:

Սույն հաշվարկներում օգտագործվել է աղբահավաքման ընթացքում դիզվառելիքի առավելագույն հնարավոր ծախսի ցուցանիշը, հաշվի առնելով նախորդ տարիների դիզվառելիքի ծախսը:

Այսպիսով՝ 18000 լ/տարի կամ՝ 18000 լ/տարի x 0.85 կգ/լ = 15300 կգ/տարի:

[6] Մեթոդիկայում ընդունված է տրանսպորտային միջոցների դասակարգումը “Քոռ ինվեստորի օֆ եմմիշոնս ին Երոփ” (այսուհետ՝ CORINAIR)՝ “Եվրոպայում մթնոլորտային արտանետումների բազային գույքագրում” մեթոդոլոգիային համապատասխան

Դիզելային վառելիքի այրման ընթացքում առաջացող վնասակար նյութերի արտանետումները բերված են աղյուսակ 4.1.1.2.-ում: Աղյուսակում միավորվել են ածխաջրածինները, ինչպես նաև ազոտի օքսիդները:

Աղյուսակ 4.1.1.2. Դիզվառելիքի այրման արտանետումները

Ավտոմեքենայի կատեգորիան	Վնասակար նյութը	Տեսակարար արտանետում-ները, գ/կգ	Արտանե-տումները, տ/տարի
Մեծ բեռնունակության ավտոտրանսպորտ	CO	36.4	0.55
	C_xH_y	8.4	0.13
	NO_x	42.3	0.64
	ՊՄ	4.3	0.065

<u>Ծծմբային անհիդրիդ</u>

Ծծմբային անհիդրիդի (SO_2) արտանետումները հաշվարկվում են ելնելով այն մոտեցումից, որ վառելիքում պարունակվող ամբողջ ծծումբը լիովին վերածվում է SO_2-ի: Այդ դեպքում կիրառվում է CORINAIR գույքագրման համակարգի բանաձևը.

ESO2 = 2Σksb, որտեղ՝

ks-ը վառելիքում ծծմբի միջին պարունակությունն է՝ 0.002 տ/տ

b –ն վառելիքի ծախսն է՝ 15.3 տ/տարի

SO_2 = 2 x 15.3x 0.002 = 0.061 տ/տարի:

4.1.2. Գազային վառելիքի այրման արգասիքները

Գազային վառելիքի օգտագործման ընթացքում առաջացող արտանետումների հաշվարկները կատարվել են ըստ CORINAIR մեթոդակարգի տեսակարար գործակիցների:

Ըստ այդմ.

Kco = 3.98 գ/կգ վառելիք,

Kno_x = 9.67 գ/կգ վառելիք:

Սույն հաշվարկներում օգտագործվել է աղբահավաքման ընթացքում գազային վառելիքի առավելագույն հնարավոր ծախսի ցուցանիշը՝ 12000 կգ, հաշվի առնելով նախորդ տարիների դիզվառելիքի ծախսը:

Գազային վառելիքի այրման ընթացքում առաջացող վնասակար նյութերի արտանետումները բերված են աղյուսակ 4.1.1.3.-ում:

Աղյուսակ 4.1.1.3. Գազային վառելիքի այրման արտանետումները

Վնասակար նյութը	Տեսակարար արտանետումները, գ/կգ	Արտանետումները, տ/տարի

CO	3.98	0.048
NO_x	9.67	1.11

Ընդամենը արտանետումների տարեկան առավելագույն քանակները բերված են աղյուսակ 4.1.1.4.-ում:

Աղյուսակ 4.1.1.4. Տարեկան արտանետումները

Վնասակար նյութը	Տարեկար արտանետումը, տ
CO	0.598
C_xH_y	0.13
NO_x	1.75
ՊՄ	0.065
SO_2	0.061

Համաձայն «Մթնոլորտային օդն աղտոտող (վնասակար) նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագծերի մշակման եվ սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագիծ ներկայացրած իրավաբանական անձանց եվ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձանց արտանետման թույլտվությունների տրամադրման կամ մերժման կամ ուժը կորցրած ճանաչելու մասին կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 4 հունվարի 2024 թվականի N 32-Ն որոշման նորմավորման են ենթակա միայն անշարժ աղբյուրներից արտանետվող վնասակար նյութերը, համապատասխանաբար ցրման հաշվարկները նույնպես կատարվում են անշարժ աղբյուրների համար:

Ներկայացվող գործունեության արտանետումների գնահատումը շրջակա միջավայրի վրա կատարելու համար սույն հաշվետվությունում կատարվել է «օդի պահանջվող օգտագործման» (ՕՊՕ) հաշվարկ, ըստ վերը բերված որոշման հավելվածում առկա եղակակի:

Օդի պահանջվող օգտագործումը մեկ տարում կամ մեկ վայրկյանում հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ՕՊՕ տարեկան} = \sum_i^n \frac{Ա_i}{ՍԹԿ_i} > 2 \text{ մլրդ.մ}^3/\text{տարի},$$

որտեղ.

$Ա_i$-ն յուրաքանչյուր i-րդ նյութի առավելագույն արտանետումն է համապատասխանաբար մեկ տարում (մգ/տարի կամ մգ/վրկ):

ՍԹԿ$_i$-ն i-րդ նյութի միջին օրական սահմանային թույլատրելի կոնցենտրացիան է՝ մգ/խոր.մ:

Հաշվարկի արդյունքները բերված են 4.1.2.1. աղյուսակում:

Աղյուսակ 4.1.2.1. ՕՊՕ ցուցանիշները

Արտանետվող նյութը	Արտանետման քանակը, տ/տարի	Միջին օրական ՍԹԿ, մգ/մ	ՕՊՕ, մլրդ.մ^3
Ածխածնի օքսիդ	0.598	3	0.199
Ածխաջրածիններ սահմանային	0.13	1	0.13
Ազոտի երկօքսիդ	1.75	0.04	43.75
Մուր	0.065	0.05	1.3
Ծծմբային անհիդրիտ	0.061	0.05	1.22
Ընդամենը			***46.599***

Ընդամենը ՕՊՕ՝ 46.599 մլրդ. մ^3/տարի

4.2. Ազդեցություն ջրային ռեսուրսների վրա

Աղբամանների և աղբարկղները պարբերաբար ախտահանվում են փրփռային աղտահանիչներով, որի արդյունքում արտահոսք չի առաջանում: Այլ ազդեցություն ջրային ռեսուրսների վրա չի նախատեսվում:

4.3. Աղմուկ և թրթռում

Ներկայացվող գործունեության ընթացքում թրթռման աղբյուր չի նախատեսվում:

Աղմուկի աղբյուր են հանդիսանալու աղբատար մեքենաները: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ աղբատար մեքենաների քանակը, ներդրումը տրանսպորտային երթևեկությունում աննշան է, աղմուկի ազդեցությունը նույնպես կարելի է համարել ոչ էական:

4.4. Հողածածկ

Հաշվի առնելով, որ աղբամանները և աղբարկղերը տեղադրված են բնակավայրերի ասֆալտապատ տարածքներում, հողային ռեսուրսների վրա բացասական ազդեցություն չի սպասվում:

4.5. Երթևեկություն

Ներկայացվող գործունեության ընթացքում աղբատար մեքենաների երթևեկությունը կստեղծի որոշակի ծանրաբեռնվածություն ներհամայնքային ճանապարհներին: Սակայն հաշվի առնելով երթերի միջին օրական թիվը, որը կլինի՝ 10-15, այս քանակը չի կարող էապես ազդել ճանապարհների երթևեկության վրա:

4.6. Կենսաբազմազանություն

Հաշվի առնելով, որ ներկայացվող գործունեությունը իրականացվում է բնակավայրերի տարածքներում, բացասական ազդեցություն կենսաբազմազանության վրա չի սպասվում:

4.7. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կլիմայի հնարավոր փոփոխություններ առաջացնող գործոնները

Կլիմայի փոփոխություններ առաջացնող գործոնների շարքին են դասվում տրանսպորտային միջոցների կողմից վառելիքի օգտագործման ընթացքում առաջացող ածխաթթու գազի արտանետումները: Հաշվարկները կատարվել են ըստ վառելիքի քիմիական բաղադրության, ենթադրելով, որ այն ամբողջությամբ այրվում է:

- Գազային վառելիք՝ 12 տ/տարի
- Դիզելային վառելիք՝ 15.3 տ/տարի:

Ըստ ՌԴ «Գազպետրոլեում» ՍՊԸ (ООО «Газпетролеум») տվյալների[7] դիզելային վառելիքում ածխածնի միջին պարունակությունը կազմում է 86%, այստեղից 15.3 տ դիզ.վառելիքի մեջ ածխածինը կազմում է 13.16 տ: Ենթադրելով, որ այրումը կատարվում է ամբողջությամբ, ածխաթթու գազի (ջերմոցային գազ) քանակն ըստ քիմիական ռեակցիայի կկազմի՝

C (ատոմային զանգված՝ 12) + O_2 (ատոմային զանգված՝ 12) = CO_2 (44)

13.16 տ : 12 x 44 = 48.25 տ/տարի (CO_2):

Բնական գազի այրման արդյունքում ածխաթթու գազի հաշվարկը կատարվել է ըստ ազգային գործակցի[8]

12000 կգ x 1.945 կգ/մ^{3}գազ : 0.74 կգ/մ^{3}գազ = 31590 կգ կամ 31.59 տ/տարի:

Ընդամենը ածխաթթու գազի քանակը՝ 75.84 տ/տարի:

Հարկ է նշել, որ այս քանակը կազմում է ՀՀ ածխաթթու գազի արտանետումների 0.000122 տոկոսը:[9]

---

[7] https://gazpetrol.ru/stati/article_post/kharakteristiki-dizelnogo-topliva-i-benzina

[8] «Հայաստանի Հանրապետության ջերմոցային գազերի ազգային կադաստրիՀաշվետվություն», 1990-2019թթ.

[9] «Հայաստանի Հանրապետության ջերմոցային գազերի ազգային կադաստրիՀաշվետվություն», 1990-2019թթ.

4.8. Կումուլյատիվ (հավաքական) ազդեցություն

Ներկայացվող գործունեության ազդեցությունը լիարժեքորեն գնահատելու համար անհրաժեշտ է այն դիտարկել տարածքի բոլոր աղտոտող գործոնների հետ համալիր և շրջանի պոտենցիալի ենթատեքստում:

Տեխնոծին ազդեցության տեսակետից ներկայացվող գործունեությունը հանդիսանում է տրանսպորտային երթևեկության տեսակ և որոշակիորեն ավելացնում է ճանապարհների ծանրաբեռնվածությունը և վառելիքի այրման արտանետումները: Սակայն, ինչպես վերը նշվել է, ազդեցությունը էական չէ և կարելի է համարել աննշան:

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ՀԱՍՑՎՈՂ ՎՆԱՍԻ ՀԱՇՎԱՐԿ

Տնտեսական վնասը շրջակա միջավայրին հասցված վնասի վերացման համար անհրաժեշտ միջոցառումների արժեքն է արտահայտած դրամական համարժեքով:

Տնտեսական վնասը հաշվի է առնում՝

- բնակչության առողջության վատթարացման հետ կապված ծախսերը,
- գյուղատնտեսությանը, անտառային և ձկնային տնտեսություններին հասցված վնասը,
- արդյունաբերությանը հասցված վնասը:

Քանի որ հողային և ջրային ռեսուրսների վրա ազդեցություն չի սպասվում, հաշվարկը կատարվել է միայն վնասակար նյութերի արտանետումների համար:

Տնտեսական վնասը հաշվարկվել է համաձայն ՀՀ կառավարության 25.01.2005թ. N 91-Ն որոշմամբ հաստատված “Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ”-ի

Յուրաքանչյուր արտանետման աղբյուրի համար տնտեսությանը հասցված վնասը գնահատվում է 1-ին բանաձևով՝

$$Ա = Շq \times Φg \times ∑Վi \times Քi$$, որտեղ

Ա -ն ազդեցությունն է, արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամերով,

Շq-ն աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն արտահայտող գործակիցն է, համաձայն նշված կարգի շարժական աղբյուրների համար գործակիցը՝ 5:

Φg-ն փոխադրման ցուցանիշն է, հաստատուն է և ընտրվում է՝ ելնելով բնապահպանության գործընթացը խթանելու սկզբունքից: Սույն կարգի համաձայն

Φg = 1000 դրամ:

Վi -ն i-րդ նյութի (փոշու տեսակի) համեմատական վնասակարությունն արտահայտող մեծությունն է:

Քi –ն տվյալ (i-րդ) նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է,

Քi գործակիցը որոշվում է 2-րդ բանաձևով՝

Քi = գ (3 ՍԱi - 2 ՍԹԱi), ՍԱi > ՍԹԱi (2)

որտեղ՝

ՍԹԱi -ն i-րդ նյութի սահմանային թույլատրելի տարեկան արտանետման քանակն է՝ տոննաներով:

ՍԱi -ն i նյութի տարեկան փաստացի արտանետումներն են՝ տոննաներով:

Քi = ՍԱi

գ = 1՝ անշարժ աղբյուրների համար,

գ = 3՝ շարժական աղբյուրների համար:

Այն նյութերի համար, որոնց նորմատիվային կոնցենտրացիան պետական ստանդարտով չի սահմանված, ազդեցությունը չի գնահատվում:

Տնտեսական վնասի հաշվարկը բերված է աղյուսակ 5.1-ում:

Աղյուսակ 5.1. Տնտեսական վնասի հաշվարկը

Արտանետվող նյութերի անվանումը	Հաշվարկի համար անհրաժեշտ ցուցանիշները			Վ	Շգ	Տնտեսական վնասը. ՀՀ դրամ
	Տi	Գ	Քi=Տi x գ			Ա = Շգ Փց ∑ ՎiՔi
Ածխածնի օքսիդ	0.598	3	1.794	1	5	8 970
Ածխաջրածիններ	0.13	3	0.39	3.16	5	6 162
Ազոտի երկօքսիդ	1.75	3	5.25	12.5	5	328 125
Պ.Մ. /մուր/	0.065	3	0.195	41.5	5	40 462
Ծծմբային անհիդրիտ	0.061	3	0.183	16.5		15 097
Ընդամենը						*398 816*

Հաշվարկված տնտեսական վնասը կկազմի՝ 398 816 դրամ:

6. ԱՂՏՈՏՈՒՄՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

6.1. Ընդհանուր դրույթներ

Ստեփանավան համայնքում աղբի հավաքման ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են ազդեցության նվազեցման միջոցառումներ:

Միջոցառումների նկարագրությունը, կատարողները և նախատեսված ծախսերը ներկայացված են բնապահպանական կառավարման պլանում: Միջոցառումների կատարումը և արդյունավետությունը վերահսկելու կարգը, դրանց կատարման պատասխանատուները և իրականացման ժամկետները ներառված են «Մոնիթորինգի ծրագրի» մեջ:

6.2. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՏԵՂԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ-ով նախատեսված միջոցառումներ

Ա. Համակարգի զարգացում

Նպատակ 1. Բարելավել Ստեփանավան համայնքի աղբահանության կառավարման համակարգը և ձևավորել համայնքային օրինական դաշտ:

Բ. Աղբահանության կառավարման ենթակառուցվածք

Նպատակ 2. Ուժեղացնել աղբահանության կառավարման ենթակառուցվածքները Ստեփանավան համայնքի ամբողջ տարածքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան սպասարկելու համար՝ հիմնելով աղբի կրճատման, վերամշակման, վնասազերծման և շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված մշտական գործընթաց:

Գ. Ֆինանսական - տնտեսական արդյունավետություն:

Նպատակ 3. Հասնել աղբահանության կառավարման ֆինանսական կայունությանը:

Դ. Հանրային իրազեկություն և մասնակցություն:

Նպատակ 4. Ապահովել բնակչության մշտական և հետևողական իրազեկումը և մասնակցությունը աղբահանության կառավարման գործընթացում:

6.3. Մթնոլորտային օդ

Նախատեսվող գործունեության հետ կապված աշխատանքներն ուղեկցվում են օդի աղտոտմամբ՝ պայմանավորված տրանսպորտային միջոցների կողմից վառելիքի օգտագործման արտանետումներով:

Դիզելային և գազային վառելիքի արտանետումները առաջանում են միայն աղբի հավաքման և աղբավայր տեղափոխման ժամանակ: Այս արտանետումները կրում են ժամանակավոր բնույթ: Հնարավոր վնասակար ազդեցությունները կբացառվեն կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացման դեպքում, մասնավորապես՝ մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի փակ թափքերի կամ դրանց ծածկման պայմաններում, ինչպես նաև կիրականացվի երթերի կանոնակարգում:

6.4. Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսները աղտոտումից պահպանելու նպատակով նախատեսված է աղբամանների և աղբարկղերի ախտահանումն իրականացնել փրփրային եղանակով:

6.5. Անբարենպաստ պայմաններում և վթարային իրավիճակներում նախատեսվող միջոցառումները և ծրագրերը

Ելնելով գործունեության բնույթից, աղբի հավաքման ժամանակ վթարային իրավիճակներ չեն սպասվում: Աշխատանքների ժամանակ հնարավոր են բնական աղետներ և անբարենպաստ օդերևութաբանական պայմաններ: Բոլոր հնարավոր դեպքերում շրջակա միջավայրի լրացուցիչ աղտոտումը կանխելու կամ հնարավոր չափով նվազեցնելու համար օպերատորի կողմից պետք է իրականացվեն հետևյալ միջոցառումները.

<u>Անբարենպաստ օդերևութաբանական պայմաններ</u>

Օդերևութաբանական անբարենպաստ պայմանները դրանք օդային ավազանում ստեղծվող այնպիսի պայմաններ են, որոնք նպաստում են վնասակար նյութերի կուտակմանը մթնոլորտի գետնամերձ շերտում:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ժամանակահատվածում (քամու արագության նվազման, անհողմության, մառախուղի առաջացման դեպքերում) ցրման գործընթացների դանդաղեցման պատճառով հնարավոր են վնասակար նյութերի գետնամերձ կոնցենտրացիաների զգալի բարձրացումներ:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների առկայությունը որոշվում է պատասխանատու աշխատողների կողմից՝ վիզուալ եղանակով:

Վիզուալ եղանակով՝ օդերևութային պայմանները անբարենպաստ համարելու վերաբերյալ կայացրած որոշումն անհրաժեշտ է ստուգել մոտակա օդերևութաբանական կայան հարցումի միջոցով:

Ըստ նշված որոշման, աղբավայրի շահագործման պատասխանատու անձանց կողմից, անձնակազմը հրահանգավորվում և տեղեկացվում է անբարենպաստ օդերևութաբանական պայմանների հնարավոր առաջացման մասին:

Ընդունված են անբարենպաստ օդերևութաբանական պայմանների 3 կատեգորիաներ: Նորմատիվ ակտերով դրանց հստակ չափորոշիչները բացակայում են: Ըստ կատեգորիաների տարբերակումը կատարվում է հետևյալ ընդհանուր սկզբունքների հիման վրա.

- I կատեգորիա՝ քամու արագության նվազում
- II կատեգորիա՝ անհողմություն, չոր եղանակ
- III կատեգորիա՝ անհողմություն, թանձր մառախուղ

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների դեպքում պետք է իրականացվեն ներքոհիշյալ միջոցառումները՝

I կատեգորիա՝

- խստացվում է աղբի հավաքման և փոխադրման հսկողությունը,

II կատեգորիա՝

- աղբատար մեքենաների երթևեկություններն իրականացվում են հերթով՝ մեկ-մեկ:

III կատեգորիա՝

- ժամանակավորապես դադարեցում է աղբի հավաքումը:

<u>Հրդեհային անվտանգություն</u>

Ա. Աղբամաններում կամ աղբարկղերում հրդեհի յուրաքանչյուր բռնկման և հրդեհի հայտնաբերման դեպքում անմիջապես տեղյակ է պահվում մոտակա հրշեջ ծառայությանը:

Բ. Հրդեհի ժամանակ անձնակազմը, մինչև հրշեջ ծառայության ժամանումը, իրականացնում է հրդեհի մեկուսացում՝ մեքենաների վրա տեղադրված կրակմարիչների միջոցով:

<u>Արտակարգ և վթարային իրավիճակներ</u>

Բնական աղետների (երկրաշարժ, սողանքներ, ջրհեղեղ և այլն), ինչպես նաև տեխնոլոգիական վթարների ժամանակ աղբահավաքումը դադարեցվում է, անձնակազմը շտապ տեղափոխվում է անվտանգ վայր:

6.6. Սոցիալական ազդեցության մեղմման միջոցառումներ

Աղբի հավաքումն ինքնին լուծում է շատ կարևոր սոցիալական խնդիր՝ աղբի խնդրի լուծում:

Ստեփանավան համայնքի աղբի հավաքման և փոխադրման աշխատանքների համար կպահանջվեն աշխատանքային ռեսուրսներ: Անձնակազմը ամբողջությամբ հավաքագրված է տեղական բնակչությունից:

Կազմակերպության գրասենյակը և ավտոկայանատեղին գտնվում են Ստեփանավան քաղաքի Թումանյան 18ա հասցեում: Շինությունը ապահովված է հանդերձարանով, հանգստի սենյակով և սանհանգույցներով:

7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

7.1. Բնապահպանական կառավարման պլան

Բնապահպանական կառավարման պլանը (ԲԿՊ) հանդիսանում է նախատեսվող գործունեության կազմակերպման և իրականացման կարևոր գործիք, այն նախանշում է անհրաժեշտ դիտարկումներ, վերահսկման մեխանիզմներ, մեղմացնող միջոցառումներ, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել աղբավայրի շինարարության և շահագործման ընթացքում՝ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություններից խուսափելու, դրանք նվազեցնելու, մեղմացնելու կամ փոխհատուցելու համար: Պլանում նշվում են հնարավոր ազդեցությունները, դրանց առավել հավանական վայրերը, առաջարկվող մեղմացնող միջոցառումները, վերջիններիս իրականացման պատասխանատուները, ինչպես նաև նախատեսված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ գումարների մոտավոր ծավալները:

ԲԿՊ-ներառում է հետևյալը.

ա/ Նախատեսվող գործունեության տեղամասերը և գործընթացները;

բ/ Պոտենցիալ բնապահպանական ազդեցությունները (ներառյալ սոցիալական, պատմամշակութային ռեսուրսների վրա ազդեցությունը);

գ/ Մեղմացնող միջոցառումներ նախապատրաստական և շահագործման (իրագործման) փուլերում

դ/ Տարբեր իրավասու կողմերի պարտավորությունները ԲԿՊ-ով նախատեսված բնապահպանական ազդեցությունները մեղմացնող միջոցառումների իրականացման ընթացքում:

Ստորև, աղյուսակի տեսքով, բերված է նախատեսվող աղբավայրի բնապահպանական կառավարման պլանը:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Շրջակա միջավայրի վրա և սոցիալական հնարավոր ազդեցություն	***Բնապահպանական կամ սոցիալական մեղմացման միջոցառում***	***Միջոցառման ծախսերը, հազ.դրամ***	***Միջոցառման պատասխանատու կամ կատարող***
	Աղբավայրի շահագործում		
Շրջակա միջավայրի բաղադրիչների աղտոտում	• Թափոնները բեռնել առանց շրջակայքի աղբոտման • Օգտագործել աղբահավաքման համար նախատեսված կոնտեյներներով աղբահանման մեքենաներ, • Պարբերաբար իրականացնել աղբատար մեքենաների ստուգում, շարժիչների կարգաբերում և անհրաժեշտության դեպքում՝ վերանորոգում • Ապահովել բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը հատուկ փրփրային միջոցներով, որոնցից չի առաջանում ջրային արտահոսք • Աղբամանների և աղբարկղերի ախտահանումը կատարել հատուկ ախտահանիչ փրփուրների միջոցով,	Ընթացիկ ծախսեր Ընթացիկ ծախսեր Ընթացիկ ծախսեր 120.0 80.0	Ստեփանավանի համայնքապե-տարան
Աշխատանքի անվտանգություն	• Սպասարկող անձնակազմին ապահովել անհատական պաշտպանման միջոցներով, իրականացնել անձնակազմի ուսուցում աշխատանքի անվտանգության հարցերով • ապահովել աշխատակիցների սննդի ընդունման և հանգստի պայմանները • Մշակել արտակարգ իրավիճակների արձագանքման պլանը, որը պետք է հասանելի լինի բոլոր աշխատակիցների համար	60.0 Ընթացիկ ծախսեր Ընթացիկ ծախսեր	Ստեփանավանի համայնքապե-տարան
Սոցիալական ազդեցություն	• Պարբերաբար կազմակերպել հանդիպումներ բնակավայրերի ղեկավարության և բնակիչների հետ՝ ներկայացնելով աղբահանության խնդիրները և նախատեսվող միջոցառումները	Ընթացիկ ծախսեր	Ստեփանավանի համայնքա-պետարան

Շրջակա միջավայրի վրա և սոցիալական հնարավոր ազդեցություն	*Բնապահպանական կամ սոցիալական մեղմացման միջոցառում*	*Միջոցառման ծախսերը, հազ.դրամ*	*Միջոցառման պատասխանատու կամ կատարող*
	• Փակցնել և կիրառել մեքենաների արագության սահմանափակումներ մեքենաների երթևեկությունից առաջացող փոշու նվազեցման համար, • Մշակել երթևեկության կառավարման պլան երթևեկության սահուն հոսքը և երթևեկության անվտագությունն ապահովելու նպատակով,		

Ընդամենը ծախսերը կկազմեն՝ 260.0 հազար դրամ/տարի:

Բնապահպանական ծախսերի առանձնացումը կրում է պայմանական բնույթ, քանի որ աղբի հավաքման նպատակը ամբողջությամբ կրում է բնապահպանական և սոցիալական բնույթ:

7.2. Մշտադիտարկումների /մոնիթորինգի/ նպատակը

Աղբի հավաքման ընթացքում մոնիթորինգի իրականացումը հնարավորություն կստեղծի ստեղծել տեղեկատվական հենք՝ հսկելու գործունեության հետագա շարունակական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա՝ վնասակար ազդեցությունների կանխման և կանխարգելման միջոցառումների մշակման համար:

Մոնիթորինգի իրականացման հիմնական նպատակն է ստեղծել տեղեկատվություն միջավայրի փոփոխությունների մասին:

7.3. Մոնիթորինգի տեխնիկական նկարագրությունը

Ստեփանավանի համայնքի աղբի հավաքման ընթացքում մոնիթորինգի միջոցառումները հետևյալն են՝

1. Օդերևութաբանական տվյալների մոնիթորինգ՝ օդերևութաբանական-կլիմայական տվյալները պետք է որոշվեն մոտակայքում գտնվող օդերևութաբանական կայանի կողմից:

2. Մեքենաների սարքին վիճակի մասին տեղեկատվությունը ստուգվում է դրանց վերանորոգման կամ կարգաբերման մասին մատյաններում կատարված գրառումների միջոցով:

3. Աղբամանների և աղբարկղների տարածքում սանիտարական իրավիճակը վերահսկվում է տեղային այցերի միջոցով:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. Պետ.ռեգիստրի վկայականի պատճեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2021-02-03

«ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ»

Համայնքային ոչ առեւտրային կազմակերպություն (ՀՈԱԿ)

Գրանցման համար	92.215.1081090
Հիմնադրման տարի	2019
Գրանցման ամսաթիվ	2019-06-28
Գործունեության ժամկետ	Անժամկետ
Կարգավիճակ	Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:
Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ)	51685122
Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)	06957214
Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովադրի ծածկագիր)	20211090
Էլ. փոստ	-
Կայք	-

Գտնվելու վայրը

Հասցե	Ս.ՍԱՐԳՍՅԱՆ Փ. / Շ / 1 ՍՏԵՓԱՆԱՎԱՆ 1901 ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ԼՈՌԻ ՀԱՅԱՍՏԱՆ
Հեռախոս	077-955-177

Գործադիր մարմնի ղեկավար

Պաշտոն	Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար
Անուն Ազգանուն	ԱՐԱՐԱՏ ՉԵՐՔԵԶՅԱՆ ՎԱՆԻԿԻ
Անձնագրային տվյալներ	011589876 2020-12-10 053
Հասցե	4 ՄԿՐՇ. 3 Փ. / Տ / 5 / 9 ՍՏԵՓԱՆԱՎԱՆ 1901 ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ԼՈՌԻ ՀԱՅԱՍՏԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ ԱՌ 2021-02-03
«ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ»
Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (ՀՈԱԿ)

Տեղեկություններ իրավահաջորդության / իրավանախորդության վերաբերյալ

Իրավանախորդ(ներ) **գրառված չեն**

Պետական միասնական գրանցամատյանում կատարված փոփոխություններ

Գրանցման ամսաթիվ	Փոփոխություններ
2021-02-03	**Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն**

Քաղվածքը տրամադրող _____ **Հրայր Մելիքջանյան**
ստորագրություն

Քաղվածքի տրամադրման ամսաթիվ՝ **03-02-2021**

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՆՔ